ՈՐՉափ փոփոխութիւն։ Սակայն և այնպէս Մարգարիտայի սիրտը կռահեց, հազիւ կարողացաւ Ստեփանէ... անուն արտաբերել, ծունկքն երերացին, կապուեցան շրթունքը, արդէն սիրտը յուզեալ էր։ Այլ մեք թողլով առ այժմ այդ սրտագին տեսարանը՝ մտնենք Կամենիցի մայր եկեղեցին։ Պայմանագիրը ստորագրուած էր, որոյ զօրութեամբ այլազգիք վերստին Լեհաց թողլով Կամենից քաղաքը հարկ էր որ հեռանային, յետին անգամ ժողոված հին փառաչէն մայր եկեղեցւոյն մէջ, զոր 'ի մզկիթ փոխած էին, կոտարեցին իրենց նամազը, յետոյ սանդուխներով դէպ 'ի կաթուղիկէն վեր ելան մոդլաները, որ իջեցընեն հոն կախուած սրբազան դրօշակը։ Երբոր հասաւ դրօշակը՝ վարը սփռած կերպասին վրայ, այնպիսի գոռում և գոչում վերուցին, որոյ նմանը շատ քիչ անգամ պէտք է լսուած լինի աշխարհիս վրայ։ Ամանք զգեստնին կը պատռէին, երեսի վրայ յերկիր կը կործանէին, մինչդեռ այլք պատկառանաք համբուրելով դրօշակը կ'ամփոփէին կերպասին մէջ, և տխուր եղանակաւ երգելով՝ կը հեռանային տաճարէն։

Այնգին՝ քիչ հեռուն Լեհաց զօրքն կազմ և պատրաստ կանգնած էին, որոյ 'ի գլուխ ալեւոր հին զօրավարն Պոկուշ, վար առնելով գլխէն ցցուն նազարդ սաղաւարտը, կնքեց զինքը Նշանաւ Խաչին, և ապա ծերունւոյն Սիմէոնի խօսքը կրկնեց. « Արդ արձակեա զծառայս քո, Տէր »։

Այս ամենայն կատարուեցաւ սեպտ. 22ին, երեքշաբաթի։ Այս դէպքէս հինգ օր վերջը, այն է 27 սեպտ. 1699, առաւօտեան խուռն բազմութիւն ժողովեցան այս եկեղեցւոյս մէջ, գրեթէ